ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.03.2021թ. թիվ 26/26-1/4282-2021 գրությամբ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.03.2021թ. թիվ 1/18-2/14665-2021 գրության հիման վրա 23.03.2021թ. թիվ 26/26-1/4282-2021 գրությամբ նախաձեռնել է «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/75 ընթացակարգի շրջանակներում 02.04.2021թ. ժամը 09:35-ին և 07.04.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.03.2021թ. թիվ 1/18-2/14665-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար համազգեստի ձեռքբերման համար 2020 թվականի նոյեմբերի 06-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 09-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը մատակարարում չի կատարել:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Կատարողի կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2021 թվականի մարտի 15-ից

միակողմանի լուծում է 2020 թվականի նոյեմբերի 06-ին կնքված ՀՀՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4 ծածկագրով պայմանագիրը:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/75 ընթացակարգի շրջանակներում 02.04.2021թ. ժամը 09:35-ին և 07.04.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ի միջև 06.11.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /կոշտ հանվող/ 1», 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /կոշտ կարվող/ 2» և 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /փափուկ/» ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

3. Պատվիրատուն «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար համազգեստի ձեռքբերման համար 2020 թվականի նոյեմբերի 06-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 09-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը մատակարարում չի կատարել:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Ձեր կազմակերպության կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2021 թվականի մարտի 15-ից միակողմանի լուծում է 2020 թվականի նոյեմբերի 06-ին կնքված «ՀՀՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4» ծածկագրով պայմանագիրը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 15.03.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.03.2021թ. թիվ 26/26-1/4282-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.03.2021թ. թիվ 1/18-2/14665-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ի միջև 06.11.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և

հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /կոշտ հանվող/ 1», 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /կոշտ կարվող/ 2» և 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /փափուկ/» ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8-րդ կետի 8.1-րդ կետի համաձայն՝ ***<u>Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</u>***

Պատվիրատուն «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար համազգեստի ձեռքբերման համար 2020 թվականի նոյեմբերի 06-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 09-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը մատակարարում չի կատարել:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Ձեր կազմակերպության կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2021 թվականի մարտի 15-ից

միակողմանի լուծում է 2020 թվականի նոյեմբերի 06-ին կնքված «ՀՀՊԵԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/4» ծածկագրով պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից 15.03.2021թ. Տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի</u>:***

Այսպիսով՝ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն իր և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև 06.11.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /կոշտ հանվող/ 1», 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /կոշտ կարվող/ 2» և 2000 հատ «Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ /փափուկ/» ապրանքների՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները և ապրանքի մատակարարման ժամկետը խախտել է 10 օրից ավելի, որի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.03.2021թ. թիվ 26/26-1/4282-2021 գրությամբ «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էդգար Խաչատրյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**